ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

«Թէ քարոզողն լինի շիջեալ մոմ, ունելով մեռեալ հաւատս, չար գործովք ոչ տայ լոյս, այլ ծուխ հանէ յինքենէ»:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերն այսօր Հայաստանում աստվածային սերը, Տիրոջ փրկարար ուսմունքը քարոզում են ոչ միայն ժողովրդի հետ ունեցած իրենց անմիջական փոխհարաբերությամբ և հաղորդակցությամբ, այլև գրավոր խոսքի միջոցով: Վերջին տարիներին կազմվեցին նոր թեմեր, իսկ գործող թեմերն առավել ևս աշխուժացրին իրենց քարոզչական գործունեությունը:

Արարատյան թեմը, որպես Հայրապետական թեմ, ունի ոչ միայն գործունեության լայն ոլորտներ, այլև պարտավորություններ: Այդ պարտավորությունների կատարման աշխատանքներին նոր եռանդով ու նվիրումով է ձեռնամուխ եղել թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, որի հրահանգով լույս է տեսնում «Ծողակն Արարատյան» երկշաբաթաթերթը:

Թերթի հիմնական նպատակը քարոզչական աշխատանքն է: Միշտ չէ, որ եկեղեցու բեմից, միջոցառումների կամ հոգևորականության հետ հանդիպումների ընթացքում հնարավոր է լինում ավետարանական ճշմարտությունները հասու դարձնել ժողովրդին: Այդ առումով գրավոր խոսքը՝ մամուլն ունի իր անփոխարինելի և կարևոր դերը: Թերթի միջոցով ընթերցողը լիարժեք պատկերացում պիտի ունենա Հայ Առաքելական Եկեղեցու դավանանքի մասին և ընդհանրական Եկեղեցու պատմության և սրբերի կյանքի մասին: Թերթում զետեղվում են նաև լրատվական նյութեր, որոնք ընթերցողին տեղյակ են պահում մեր Եկեղեցում տեղի ունեցած իրադարձություններին:

Թերթի գլխավոր խմբագիրը՝ Արսեն Պողոսյանը, այսպես է պատկերացնում իր առջև դրված խնդիրը. «Ծողակն Արարատյան» թերթի նպատակն է ընթերցողներին պարզ և մատչելի կերպով ներկայացնել սուրբգրային ճշմարտությունները, հաղորդակից դարձնել մեր ժողովրդի ազգային-հոգևոր արժեքներին: Թերթը մեկ անգամ ևս պետք է փաստի, որ մեր պապերի կողմից դավանած քրիստոնեությունը ոչ թե կյանքից կտրված լոկ մի ուսմունք է, այլ ճշմարիտ աշխարհընկալում և ճշմարիտ ապրելակերպ: Ըստ այդմ թերթը իր էջերում պետք է ներկայացնի մեր հասարակական կյանքի բոլոր ոլորտներում առկա խնդիրները՝ դիտարկված քրիստոնեական հայեցակետից»:

Թերթը նախատեսված է ընթերցող լայն շրջանակների համար, չեն անտեսված նաև երեխաները: Մանկական էջում նրանք կարող են կարդալ հետաքրքիր և ուսանելի նյութեր աստվածային ճշմարտությունների, բարու հաղթանակի մասին: Թերթի նյութերն ունեն բովանդակային տարաբաժանում. 1. Տոնախոսական, որի տակ ընդգրկվում են Հայ Եկեղեցու տոնացույցին համապատասխան նյութեր: 2. Թեմական կյանք, որտեղ թեմի առօրյա քարոզչական գործունեությունը լուսաբանող նյութերն են արտացոլված: 3. Ճանաչենք մեր մայր Եկեղեցին խորագրի տակ ընդհանուր Եկեղեցուն, ինչպես և Հայ Եկեղեցուն վերաբերող նյութերն են: 4. Ուղղափառ դավանություն և հերձվածություն խորագրի տակ զետեղվում են այնպիսի նյութեր, որոնք պատմում են մերօրյա աղանդների օտարամետ և քայքայիչ գործունեության մասին: Նախատեսված է նաև ազգային-հոգևոր արժեքների մասին պատմող էջ:

Թերթի խմբագրական կազմն աշխատում է հավատով ու նվիրումով, որպեսզի «Ծողակն Արարատյան»ը, որպես բոցկլտուն մոմ, կենդանի հավատք տարածի, որպեսզի կյանքում նահանջի չարը, և աշխարհին տիրի աստվածային սերն ու բարին:

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը սրտանց շնորհավորում է նոր պարբերաթերթի լույս աշխարհ գալը և մաղթում բարի երթ ու եռանդուն գործունեություն ի շահ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հավատացյալ հայ ժողովրդի: